# Արջի ծառայություն

Պապիկն իր թոռնիկի հետ անցնում էր մի տղայի կողքով, ում հայրը հանձնարարել էր մինչև խաղալը ցանկապատը վերանորոգել: Տղայի ձեռքից գործիքը ցած էր ընկնում, տախտակը չէր ուզում իր տեղը նստել: Մուրճով պատահաբար հարվածելով իր մատին, տղան մի կողմ նետեց մուրճը և թախիծով նայեց մի քիչ այն կողմում խաղացող ընկերների կողմը: Ծերունու թոռնիկը կարեկցեց տղային և արագ վերցնելով մուրճը՝ մեխեց տախտակը: Սակայն ծերունին անմիջապես մոտեցավ ու սկսեց արագ պոկել տախտակը:

— Ինչու՞ ես այդպես վարվում, պապիկ: Դու ինձ միշտ սովորեցրել ես լինել բարի, սակայն այժմ հնարավորություն չես տալիս օգնելու: — Ես քեզ բարություն եմ սովորեցրել, ոչ թե կեղծավորություն: Այդ տղայի փոխարեն կատարելով նրա աշխատանքը, դու ոչ միայն թույլ չտվեցիր նրան սովորել, թե ինչպես վերանորոգի ցանկապատը, այլ նաև հնարավորություն չտվեցիր սովորել համբերատար լինել և իմանալ, որ սկզբից պետք է գործն անել, հետո նոր խաղալ: Քո «բարի» արարքով դու կարող ես փչացնել նրա կյանքը:

## Հարցեր և առաջադրանքներ՝

1. Ինչո՞ւ է ստեղծագործությունը կոչվում Արջի ծառայություն:

   Քանի որ տղան ուզում մեր օգներ միուս տղային, բայց դրա տեղը նրան ավելի վնաս տվեց:

2. Ի՞նչ սովորեցրեց քեզ այս առակը:

   Ես սովորեցի այս առակից, որ պետք է օգնել նրան, ով դրա կարիքը ունի:

3. Ինքդ վերնագրիր առակը:

   <<Տղայի օգնությունը>>

4. Վերջին նախադասության մեջ «բարի» բառը գրված է չակերտների մեջ: Ինչո՞ւ:

   <<Բարի>> բառը գտնվում է չակերտների մեջ, քանի որ տղան բարի գործի տեղը արեց վատ գործ:

5. Ծերունի, թոռնիկ, տախտակ, կեղծավորություն, համբերատար, մուրճ բառերը բաժանիր բաղադրիչների, յուրաքանչյուրի դիմաց գրիր բառի տեսակը ըստ կազմության:

Ծերունի — ծեր + ունի, ածանցավոր
Թոռնիկ — թոռ + իկ, ածանցավոր
Տախտակ — պարզ, գոյական
Կեղծավորություն — կեղծ + ավոր + ություն, ածանցավոր
Համբերատար — համբերություն + ա + տանել, բարդ
Մուրճ — պարզ, գոյական

6. Ընտրի՛ր ճիշտ պնդումը:

ա) Հոմանիշները ձևով նույն, իմաստով տարբերվող բառեր են:
սխալ
բ) Հոմանիշները նույն կամ նման իմաստներ արտահայտող, ձևով տարբերվող բառեր են:
ճիշտ
գ) Հոմանիշները հակառակ իմաստներ արտահայտող բառեր են:
սխալ

7. Տրված նույնանուն (համանուն) բառերով նախադասություններ կազմի՛ր:
այր-այր, հարկ-հարկ

Պետական այրերը պետք է լինեն ողջամիտ:
Ես և իմ ընկերուհին ապրում ենք նույն հարկում:

8. Ընտրի՛ր այն բառակապակցությունը, որն արտահայտում է «սարսափազդու» բաղադրյալ բառի իմաստը:

ազդու սարսափ, սարսափ ազդարարող, սարսափ ազդող, սարսափ ազդել

9. Տրված բաղադրյալ բառերի իմաստներն արտահայտի՛ր բառակապակցություններով:

տուֆակերտ — տուֆից կերտված
մարդանման — մարդու նման
անընդհատ — առանց դադար
խնձորենի — խնձորի ծառ